Դ.Սոկոլով «Ճուտը» հեքիաթի քննարկում. «Ճուտը» հեքիաթը կարդալուց հետո

:•

Հեքիաթը կարդալուց հետո, մտածեցի, որ ճուտիկը շատ համարձակ և խիզախ էր: Նա իր փոքրիկ, բայց և մեծ տնակում, որը նաև իր համար մոլորակ էր հանդիսանում, բոլոր ընկերներին ում հանդիպեց ճանապարհորդության ընթացքում՝ հրավիրեց իր փոքրիկ ձվիկի մեջ ապրելու: Նա նաև շատ մեծ սիրտ ուներ և շատ ընկերասեր էր: Ինձ համար այս հեքիաթի ամենահետաքրքիր հերոսը ականջ պապն էր, որովհետև նա շաաաաա՜տ մեծ և արտասովոր ականջ ուներ:



Ալեքս գրիգորյան
Գեղարվեստի դպրոց-պարտեզ
3-րդ դասարան

:•

Այս հեքիաթը մի տխուր ճուտիկի մասին է, որն ընտանիք էր ուզում ունենալ:
Ինձ շատ հետաքրքիր է, թե նրա մայրիկը որտեղ էր և ինչու էր թողել նրան թողել ծառի վրա;
Ամենաշատը զարմացրեց այս հեքիաթում այն, թե ինչպես հսկան տեղավորվեց ձվի մեջ:

Ինձ թվում է այս հեքիաթը նման է երկրագնդին միայն նրանով, որ այդ ձվի մեջ բոլորը տեղավորվում են:



Մարիամ Առաքելյան
Գեղարվեստի դպրոց-պարտեզ
3-րդ դասարան

:·

1. Ի՞նչ մտածեցիր հեքիաթը կարդալուց անմիջապես հետո:
   Մտածեցի, որ ճուտը պատմելու շատ բան ունի:
2. Ի՞նչ կասես ճտի մասին:
   Նա խելացի է:
3. Ինչ-որ բան զարմացրե՞ց քեզ այս հեքիաթում: Եթե՝ այո, ապա՝ ի՞նչը:
   Ճուտիկը:
4. Քո կարծիքով՝ ինչի՞ մասին է հեքիաթը:
   Ճուտիկի:
5. Ամենահետաքրքիրը ո՞վ էր այս հեքիաթում. Ինչո՞ւ ես այդպես կարծում:
   Ճուտիկը: Որովհետև ճուտիկը գնաց ուրիշ ընտանիք:
6. Հեքիաթը նմա՞ն է երկրագնդին: Ինչո՞վ:
   Որովհետև ճուտիկը ձվի մեջ ից էր:

Նարե Գրիգորյան
Գեղարվեստի դպրոց-պարտեզ
3-րդ դասարան

:

- Ի՞նչ մտածեցիր հեքիաթը կարդալուց անմիջապես հետո:
  Ափսոս պապի քունը տարավ, թե չէ էլի մի նոր հեքիաթ կպատմեր:
- Ի՞նչ կասես ճտի մասին:
  Ճուտիկը շատ փոքրիկ էր ու շատ միամիտ, ընկերասեր:
- Ինչ-որ բան զարմացրե՞ց քեզ այս հեքիաթում: Եթե՝ այո, ապա՝ի՞նչը:
  Որ մի փոքրիկ ձվի մեջ տեղավորվեցին՝ Ականջ պապը, Կանաչ հրեշը, ութոտնուկը և ճուտը:
- Քո կարծիքով՝ ինչի՞ մասին է հեքիաթը:
  Հեքիաթը դեղին ձվի ու դեղին ճուտիկի մասին էր:
- Ամենահետաքրքիրը ո՞վ էր այս հեքիաթում. Ինչո՞ւ ես այդպես կարծում:
  Հետաքրքիրը հրեշն էր, որովհետև հրեշը ծիծաղելի էր: Նրա վրա, իր ալարկոտությունից, խոտեր, ծառեր ու ծաղիկներ էին աճել:
- Հեքիաթը նմա՞ն է երկրագնդին: Ինչո՞վ:
  Այո: Չվով, այսինքն ձուն երկրագնդի նման է:

Մայիլյան Լուսինե
Գեղարվեստի դպրոց-պարտեզ
3-րդ դասարան

:·

- Ի՞նչ մտածեցիր հեքիաթը կարդալուց անմիջապես հետո:
  Ես մտածեցի, որ շատ հետաքրքիր և անսովոր հեքիաթ է և հեքիաթի ձուն նման է մեր մոլորակին:
- Ի՞նչ կասես ճտի մասին:
  Դե ճուտիկը կարծում եմ շատ բարի և մեծ սիրտ ուներ, որովհետև բոլորին կարողացավ տեղավորել իր ձվիկի մեջ:
- Ինչ-որ բան զարմացրե՞ց քեզ այս հեքիաթում: Եթե՝ այո, ապա՝ ի՞նչը:
  Թվում է, թե ձուն իրականում շատ փոքրիկ է, այնքա՛ն փոքրիկ, որ կարող եմ

այն պահել ձեռքիս ափի մեջ: Բայց ա՜յ քեզ զարմանալի բան... տեսա՞ք, թե ճուտիկը ինչքա՜ն բան տեղավորեց այնտեղ... Իսկ միգուցե ձուն կախարդակա՞ն էր:

- Քո կարծիքով՝ ինչի՞ մասին է հեքիաթը:
  Ճուտիկի և իր ընկերների:
- Ամենահետաքրքիրն ո՞վ էր այս հեքիաթում. Ինչո՞ւ ես այդպես կարծում:
  Ամենահետաքրքիրը ճուտիկն է: Նա շատ հյուրընկալ է և ընկերասեր:

Միքայել Ավետիսյան
Գեղարվեստի դպրոց-պարտեզ
3-րդ դասարան